Տ. ԵՂՐԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ծնվել է 1959 թ. հոկտեմբերի 3-ին Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում:

1977 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1978 թ. մեկնել է զինվորական ծառայության: Զորացրվելուց հետո, 1980 թ., ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1983 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնի օրը, Տ. Ներսես եպս. Պոզապալյանի ձեռամբ ձեռնադրվել է սարկավագ:

1984 թ. ավարտել է Հոգևոր Ճեմարանը և պաշտպանել «Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու «Ձեռնադրության Մաշտոցի» զարգացումը Ժ-ԺԴ դդ.» թեմայով ավարտաճառը՝ արժանանալով «գերազանց» գնահատականի:

1985 թ. սեպտեմբերի 8-ին Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի հրամանով, ձեռամբ Տ. Ներսես եպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1984-1986 թթ. Հոգևոր Ճեմարանում դասավանդել է «Ներածություն Հին Կտակարանի» առարկան:

1986-1988 թթ. սովորել է Լենինգրադի Հոգևոր ակադեմիայում:

1988 թ. նշանակվել է Լենինգրադի հոգևոր հովիվ:

2000 թ. հոկտեմբեր ամսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական բարձր տնօրինությամբ, նշանակվել է Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդի պաշտոնակատար:

2001 թ. փետրվարի 21-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի պատմությունը» թեմայով: Նույն թվականի փետրվարի 22-ին, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ստացել է վարդապետական աստիճան:

2001 թ. ապրիլից, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական բարձր տնօրինությամբ, նշանակվել է Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ և Մոսկվայի ու Համայն Ռուսիո պատրիարքությունում՝ Հայ Եկեղեցու ներկայացուցիչ:

2001 թ. սեպտեմբերի 30-ին, ձեռամբ Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս: